



**ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N° 06272321**

<b>ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ</b>	<i>„ UAZ 31512,, մակնիշի 923 LL 70 պետհամարանիշով ավտոմեքենա</i>
<b>ՊԱՏՎԻՐԱՏՈՒ</b>	<i>ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարան՝ ի դեմս համայնքի ղեկավար Ահարոն Աղաբեկի Խաչատրյանի</i>
<b>ԳՆԱՀԱՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ</b>	<i>„Ա.Գ. ԷՍԹԵՅԹ,, ՍՊԸ</i>

## **Բովանդակություն**

1.	Ընդհանուր տեղեկություններ	3
2.	Գնահատման գործընթացը	6
3.	Գնահատման մոտեցումների նկարագրությունը	6
4.	Գնահատման համար տեղեկատվության հավաքագրում	8
5.	Գնահատման մոտեցումների ընտրությունը	8
6.	Գնահատման օբյեկտի բնութագիրը	9
7.	Գնահատման օբյեկտի շուկայական արժեքի որոշումը	12
8.	Արդյունքների համաձայնեցում և ամփոփում	14
9.	Գնահատման արդյունքների առևտրային գաղտնիության պայմանները	14
10.	Գնահատողի անկախությունը	14
11.	Պատվիրատուի և երրորդ անձանց առջև գնահատողի պարտավորությունները	15
12.	Գնահատման համար օգտագործված փաստաթղթերի, գրականության և տեղեկատվության աղբյուրների ցանկը	16
13.	Հավելված	17

### **1. Ընդհանուր տեղեկություններ**



**Գնահատման գործունեություն իրականացնող անձի տվյալները**

Աղյուսակ 1

Անվանումը և կազմակերպչական-իրավական ձևը	„Ա. Գ. ԷՍԹԵՅԹ,, Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն
Իրավաբանական հասցեն	Ք. Գյումրի Գ. Նժդեհի փող. 26 շենք թիվ 21/1
Գործադիր մարմնի ղեկավար	Տնօրեն՝ Գ. Պապոյան
Հեռախոս	(094) 707052

**Գնահատող**

Գույքի գնահատողի և որակավորման վկայականի վերաբերյալ տվյալները բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Ա. Ա. Հ.	Որակավորման և մասնագիտական կրթության վերաբերյալ փաստաթուղթ
Արարատ Ռաֆիկի Պապոյան	Գնահատողի որակավորման վկայական N°ԳԳ-2022-11, վկայականի գործողության ժամկետը՝ անժամկետ Գնահատողի պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագրի-LB001433

Գնահատողի որակավորման վկայականը և ապահովագրական պայմանագրի պատճեն կցված է գնահատման հաշվետվությանը:

**Պատվիրատու**

Գնահատման աշխատանքների կատարման պատվիրատու է հանդիսանում ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանը՝ ի դեմս համայնքի ղեկավար Ահարոն Աղաբեկի Խաչատրյանի/ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարդենիս Հ. Անդրեասյան փող. 4/:

**Գնահատման պատվերի իրավական հիմքը**

Շարժական գույքի գնահատման պատվերի իրավական հիմք է հանդիսանում ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի՝ ի դեմս համայնքի ղեկավար Ահարոն Աղաբեկի Խաչատրյանի հետ 27.06.2023 թվականին կնքված թիվ 0627231 ծառայությունների մատուցման պայմանագիրը :

**Գնահատման առաջադրանք:**

Գնահատման առաջադրանքը կցված է գնահատման հաշվետվությանը և գնահատման պայմանագրին կցված հավելվածին: Ըստ գնահատման առաջադրանքի, մեքենայի մի շարք հանգույցներ և դետալներ մեքենայի վրա տեղադրված են այլ անձանց կողմից և գնահաշվարկներում դրանց արժեքը պետք չէ ներառել(ցանկը բերված է մեքենայի նկարագրության բաժնում ):

**Գնահատման ստանդարտը (ստանդարտները), որի հիման վրա իրականացվել է գնահատումը.**

Գնահատումը իրականացվել է ՀՀ կառավարության 24 օգոստոսի 2022 թվականին կայացված „ Հայաստանի Հանրապետությունում գնահատման ստանդարտները, ինչպես նաև գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները սահմանելու մասին,, թիվ N 1355-Ն որոշման (24.08.2022թ.) համապատասխան:

**Գնահատման համար պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերը**

Պատվիրատուի կողմից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը՝

„Ա. Գ. Էսթեյթ,, ՄՊԸ



- Տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը թիվ XL06541, տրված 01.12.2020 թվականին :
- Գնահատման դիմում և միջնորդագիր:

Ներկայացված փաստաթղթի պատճեն կցված է հավելվածում :

**Գնահատվող գույքի էլակետային տվյալները, դրանց հավաստիության աղբյուրը**

Գնահատվող շարժական գույքի էլակետային տվյալները վերցվել են գնահատման օբյեկտի վերաբերյալ պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա տվյալներից: Ներկայացված իրավահաստատող փաստաթղթերը և նրանցում առկա տվյալները գնահատողի կողմից ընդունվել են որպես հավաստի:

Գնահատողը չի զբաղվել գնահատման օբյեկտի ֆիզիկական և այլ պարամետրերի չափումով ` գնահատման օբյեկտի վերաբերյալ ներկայացված փաստաթղթերում առկա բոլոր տվյալները գնահատողի կողմից ընդունվել են որպես հավաստի տվյալներ:

**Գնահատման օբյեկտը /օբյեկտները /**

Գնահատման օբյեկտ է հանդիսանում ,, UAZ 31512,, մակնիշի 923 LL 70 պետհամարանիշով ավտոմեքենան:

**Գնահատման նպատակը**

Գնահատման նպատակն է գնահատման օբյեկտի շուկայական արժեքի որոշումը:

„ Շուկայական արժեքը հաշվարկային դրամական մեծություն է, որով հավանաբար կիրականացվեր, գնահատման ամսաթվի դրությամբ, շահագրգիռ կողմերի միջև, բաց և մրցակցային շուկայում գնահատվող օբյեկտի փոխանակում, որի պարագայում կողմերից յուրաքանչյուրը, իրազեկված լինելով, գործում է ողջամտորեն և առանց հարկադրանքի : „

( ,,Հայաստանի Հանրապետությունում գնահատման ստանդարտները, ինչպես նաև գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները սահմանելու մասին,, ՀՀ կառավարության 24 օգոստոսի 2022 թվականի թիվ N 1355-Ն որոշում)

**Գնահատման գործառույթը**

Գնահատման արդյունքների օգտագործման նպատակն է շարժական գույքի շուկայական արժեքից էլնելով, որոշումներ կայացնելը ` ներառյալ մեքենայի օտարման վերաբերյալ:

**Գնահատվող իրավունքի տեսակը**

Սույն հաշվետվության մեջ ,, գնահատվող իրավունքի տեսակը ,, տերմինը մեկնաբանվում է որպես ,, գույքի նկատմամբ գնահատման և օտարման ենթակա գույքային իրավունքի տեսակ ,, [1]: Տվյալ դեպքում գնահատվել է գնահատման օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը:

**Տեղագնության ամսաթիվը :**

Տեղագնության ամսաթիվն է 27.06.2023թ. :

**Գնահատման ամսաթիվը**

Գնահատման ամսաթիվն է 27.06.2023թ.: Գնահատման բոլոր աշխատանքները կատարված են այդ ամսաթվի դրությամբ: „...Գնահատման ամսաթվի դրությամբ.. „ արտահայտությունը պահանջում է, որ հավանական շուկայական արժեքի մեծությունը վերաբերվի կոնկրետ ամսաթվի: Կապված շուկայի և շուկայական իրավիճակի փոփոխությունների հետ, հավանական արժեքը կարող է այլ ժամանակի համար սխալ լինել կամ չհամապատասխանել իրականությանը: Գնահատման արդյունքը

„Ա.Գ.Էսթեյթ,, ՄՊԸ

Գնահատող



արտահայտում է շուկայի ընթացիկ իրավիճակը և պայմանները փաստացի ամսաթվի դրությամբ, ոչ թե անցյալ կամ ապառնի ժամանակում:

**Գնահատման հաշվետվության կազմման ամսաթվերը և հերթական համարը**

Գնահատման հաշվետվության կազմման ամսաթիվը հանդիսանում է 27.06.2023թ.: Գնահատման գործունեություն իրականացնող անձի համարակալման համակարգում սույն շարժական գույքի գնահատման հաշվետվությանը վերագրված է ԹԻՎ- 06272321 հերթական համարը:

**Գնահատման աշխատանքների կատարման ժամանակահատվածը**

Գույքի գնահատման աշխատանքները կատարվել են 27.06.2023թ.-ին:

**Գնահատման հաշվետվության ձևը**

Գնահատման հաշվետվությունը ձևակերպված է պատմողական ձևով, ունի տեքստային և աղյուսակային մեկնաբանություններ, նկարներ, բաղկացած է 20 էջից: Գնահատողի կողմից կատարված բոլոր հաշվարկները կատարվել են «Microsoft Excel» ծրագրի միջոցով: Սույն հաշվետվության մեջ հաշվարկային աղյուսակներում ցուցանիշերի արժեքները բերված են որոշակի կլորացմամբ:

**Տեքստային և սահմանումներ** Հաշվետվությունում օգտագործված տերմինները և սահմանումները, որոնք տվյալ հաշվետվության մեջ մեկնաբանված չեն, կիրառվել են և մեկնաբանվում են ՀՀ կառավարության 24 օգոստոսի 2022 թվականին կայացված „ Հայաստանի Հանրապետությունում գնահատման ստանդարտները, ինչպես նաև գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները սահմանելու մասին,» թիվ N 1355-Ն որոշման (24.08.2022թ.), „ Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին” ՀՀ Օրենքով ( ՀՕ – 189 –Ն ), ինչպես նաև „ Գնահատման միջազգային ստանդարտով,» և այլ համապատասխան իրավական ակտերով սահմանված հիմնական հասկացություններին և մեկնաբանություններին համահունչ:

**Գնահատման գործընթացում ընդունված ենթադրություններ**

1. ենթադրություն, որ գնահատվող օբյեկտը փոխանցվում է որպես մեկ ամբողջականություն,

**Հատուկ ենթադրություններ**

1. ենթադրություն, որ գնահատման օբյեկտը ազատ է որևէ ծանրաբեռնվածություններից՝ վաճառքի սահմանափակումներ, գրավով ծանրաբեռնվածություն և այլն:
2. ենթադրություն, որ գնահատման ներկայացված մեքենան գնահատման օրվա դրությամբ համապատասխանում է գնահատման առաջադրանքով տրված մեքենայի բնութագրերին և վիճակի նկարագրին:
3. ենթադրություն, որ մեքենայի վաճառքը իրականացվելու է „ ինչպես որ կա,» սկզբունքին համապատասխան ( << sale as is >> ), որը նշանակում է, որ վաճառողը վաճառում է, իսկ գնորդը գնում է վաճառքի առարկան այն վիճակում, ինչպես որ կա տվյալ պահին, և որ գնորդն այն ընդունում է «բոլոր թերություններով», որոնք ի հայտ են եկել այդ պահին կամ ի հայտ կգան հետագայում: Վաճառքի առարկան օտարվում է առանց երաշխիքների և վաճառողը պատասխանատվություն չի կրում և չունի

պարտավորություններ կապված ներկայումս կամ հետագայում առաջացող թերությունների և դրանց վերացման հետ կապված ծախսերի հետ:

4. ենթադրություն, որ գնահատման օբյեկտը չունի այլ թերություններ, անսարքություններ, մոդելի վերափոխումներ, ձևափոխումներ, որոնք կազդեին գնահատման օբյեկտի շուկայական արժեքի վրա

5. ենթադրություն, որ գնահատման առաջադրանքով տրված և համայնքի սեփականություն չհանդիսացող դետալների, հանգույցների ու համակարգերի շուկայական արժեքները համապատասխան չափով նվազեցնում են գնահատման օբյեկտի շուկայական արժեքը:

Սույն ենթադրությունները համապատասխանում են գնահատման նպատակին:

### Փոխարժեքը

1 ԱՄՆ դոլարը ըստ ԿԲ / 07.02.2023թ. / տվյալների հավասար է 396.62 ՀՀ դրամ:

## **2. Գնահատման գործընթացը**

Գնահատման աշխատանքների ընթացակարգը իրականացվել է հետևյալ հաջորդական փուլերով

- նախապատրաստական փուլ,
- հիմնական փուլ:

Նախապատրաստական փուլում իրականացվել է.

ա) գնահատվող գույքի փաստաթղթերի հավաքագրում և ուսումնասիրություն, պատվերի ընդունում,

բ) գնահատման առաջադրանքի ձևակերպում և պայմանագրի կնքում:

Փաստաթղթերի նախնական ուսումնասիրության ընթացքում փաստաթղթերի հիման վրա պարզվել է գնահատման ներկայացված օբյեկտի իրավական կարգավիճակը, ինչպես նաև գույքի քանակական և որակական տվյալները:

Ձևակերպվել է գնահատման առաջադրանքը և օրենսդրությամբ սահմանված կարգով կնքվել է համապատասխան պայմանագիրը:

Հիմնական փուլում իրականացվել է.

1. գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, մշակում և վերլուծություն,

2. գնահատման համապատասխան մոտեցումների և մեթոդների ընտրություն,

3. գնահատում՝ ընտրված մեթոդի / կամ մեթոդների / կիրառմամբ, վերջնական արդյունքի հաշվարկման նպատակով տարբեր մեթոդներով հաշվարկված արդյունքների համադրում,

4. հաշվետվության կազմում և տրամադրում:

## **3. Գնահատման մոտեցումների նկարագրությունը**

Գնահատման հիմնական մոտեցումներն են՝ համեմատական մոտեցում, եկամտային մոտեցում, ծախսային մոտեցում: Դրանք բոլորը հիմնված են գնային հավասարակշռության տնտեսական սկզբունքների, փոխարինման կամ շահույթի ակնկալիքների վրա:

### Համեմատական մոտեցում

„Ա.Գ. Էսթեյթ“, ՄՊԸ

Համեմատական մոտեցման կիրառման դեպքում արժեքը որոշվում է գնահատվող օբյեկտը նույնական կամ համադրելի (նմանատիպ) օբյեկտների հետ համեմատելով, որոնց համար առկա է գների վերաբերյալ տեղեկատվություն:

Համեմատական մոտեցմամբ անշարժ գույքի արժեքը որոշվում է գնահատվող անշարժ գույքին համադրելի գույքի շուկայական գների վերլուծության և համապատասխան ճշգրտումների իրականացման միջոցով:

Երբ արժեքը որոշելու նպատակով օգտագործվում է նույնական կամ համադրելի օբյեկտների հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը, ապա դա կոչվում է համադրելի գործարքների մեթոդը, որը նաև հայտնի է որպես կողմնորոշիչ գործարքների մեթոդ:

Երբ արժեքը որոշելու նպատակով օգտագործված համադրելի գործարքները ներառում են նաև գնահատվող օբյեկտի գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը, ապա դա կոչվում է նախնական գործարքների մեթոդ:

Համեմատական մոտեցման կիրառմամբ գույքի գնահատումն իրականացվում է հետևյալ փուլերով՝

- 1) համանման և համադրելի օբյեկտների շուկայի ուսումնասիրություն,
- 2) համանման և համադրելի անշարժ գույքի համար շուկայական տվյալների հավաքագրում, մշակում և արժանահավատ տեղեկատվության ընտրություն,
- 3) համեմատության համապատասխան միավորի որոշում,
- 4) համեմատության անհրաժեշտ տարրերի առանձնացում,
- 5) համեմատության միավորների արժեքի ճշգրտում՝ ըստ համեմատության տարրերի,
- 6) համեմատվող գույքի միավորների ճշգրտված արժեքների համադրում և համապատասխանեցում մեկ ցուցանիշի կամ միջակայքի (կշռում):

Համեմատվող գույքի գների ճշգրտումն իրականացվել է հետևյալ կարգով՝

1) առաջին հերթին իրականացվել են առաջարկի և վաճառքի ամսաթվի, պայմանների և շուկայի վիճակի գործոններին վերաբերող ճշգրտումները, որոնք կատարվում են նախորդ արդյունքի նկատմամբ՝ յուրաքանչյուր հաջորդ ճշգրտման կիրառմամբ,

2) երկրորդ հերթին իրականացվել են անմիջականորեն գույքին վերաբերող ճշգրտումները, որոնց իրականացման հերթականությունը որոշվել է անշարժ գույքի արժեքի մեծության վրա գործոնի ազդեցության չափով (բարձրից ցածր):

#### **Եկամտային մոտեցում**

Եկամտային մոտեցմամբ արժեքը որոշվում է գնահատվող օբյեկտի եկամտաբերությամբ, դրամական հոսքի կամ ծախսերի արժեքի հիման վրա:

Եկամտային մոտեցման մեթոդները փաստացի հիմնված են ապագա դրամական հոսքերի գումարների դիսկոնտավորմանը (փոխակերպմանը) ընթացիկ արժեքին: Դրանք են՝

1) Դրամական հոսքերի դիսկոնտավորման մեթոդի (ԴՀԴ) համաձայն կանխատեսվող դրամական հոսքը դիսկոնտավորվում է հակառակ ուղղությամբ (ապագայից և) մինչ գնահատման ամսաթիվը, որն արդյունքում թույլ է տալիս ստանալ գնահատվող օբյեկտի ընթացիկ արժեքը:

2) Եկամտի կապիտալիզացիայի մեթոդ:

#### **Ծախսային մոտեցում**

Ծախսային մոտեցման հիմքում ընկած է այն սկզբունքը, ըստ որի գնորդը գնահատվող օբյեկտի համար չի վճարի ավելին, քան հավասար օգտակարությամբ օբյեկտ ձեռք բերելու դեպքում, լինի դա գնման կամ կառուցման միջոցով, գործընթացը բարդացնող գործոնների բացակայությամբ՝ անհարկի ժամանակ, անհարմարություն, ռիսկ կամ այլ գործոններ:

Այս մոտեցումը հնարավոր է դարձնում ստանալ օբյեկտի արժեքը փոխարինման կամ վերարտադրման ընթացիկ ծախսերի որոշման միջոցով և մաշվածության բոլոր տեսակների կիրառմամբ:

Առկա է ծախսային մոտեցման երեք մեթոդ՝

1. ծախսերի փոխարինման մեթոդ, որն արտացոլում է համարժեք օգտակարությամբ նմանատիպ օբյեկտի ստեղծման ծախսերի հաշվարկման միջոցով որոշվող արժեքը,
2. ծախսերի վերարտադրման մեթոդ, որն արտացոլում է օբյեկտի ճշգրիտ նմանակի վերստեղծման ծախսերի հաշվարկման միջոցով որոշվող արժեքը,
3. բաղադրիչային մեթոդ, որի միջոցով օբյեկտի առանձին բաղադրիչ մասերի արժեքները գումարելով հաշվարկվում է գնահատվող օբյեկտի արժեքը:

#### 4. Գնահատման համար տեղեկատվության հավաքագրում

Գնահատման նպատակով հավաքագրվել և վերլուծվել է տեխնիկական, շուկայական և այլ տեղեկատվություն, որն անհրաժեշտ և բավարար է գնահատվող գույքի հիմնավորված արժեքի հաշվարկման համար: Վերլուծվել են WWW List . am, WWW auto.am կայքէջերում գետեղված համանման և համադրելի գույքերի վաճառահամնան տեղեկատվությունը, սեփական տեղեկատվական բազայի տվյալները:

Կատարվել է համանման և համադրելի գույքերի արժանահավատ տեղեկատվության ընտրություն:

#### 5. Գնահատման մոտեցումների ընտրությունը

Գնահատման ծախսային մոտեցում - քանի որ ներկայումս նմանատիպ գույք չի արտադրվում, իսկ արտադրվող մոդելները էապես տարբերվում են գնահատվողից և համադրելի չեն նրան, հետևաբար այս մեթոդը չի կիրառվի:

**Հասնեմատական մոտեցում** – այս մեթոդի կիրառումը հիմնավորված է, քանի որ առկա են բաց և մրցակցային շուկայում վաճառված, ինչպես նաև ազատ շուկայում հրապարակայնորեն վաճառահանված բավարար քանակի համանման և համադրելի շարժական գույքերի վերաբերյալ արժանահավատ տեղեկատվություն, հնարավոր է կատարել շուկայական գների վերլուծություն, իրականացնել համապատասխան ճշգրտումներ:

**Եկամտային մոտեցում**՝ տվյալ դեպքում հիմնավորված չէ, քանի որ նմանատիպ գույքերի վարձակալական շուկան ձևավորված չէ: Առկա չեն մեթոդի կիրառման համար անհրաժեշտ և բավարար քանակի տվյալները:

#### 6. Գնահատման օբյեկտի բնութագիրը

Գնահատման օբյեկտի բնութագիրը ներկայացված է 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

Հ/Հ	Ավտոմեքենայի անվանումը	Նկարագիրը



1.	„UAZ 31512,, մակնիշի	Պեոհամարանիշ- 923 LL 70 Նույնականացման համարը – XTT 315120 K0210057 SU տեսակը –թեթև մարդատար Թափքի տեսակը – ունիվերսալ Գույնը – գորշ Արտադրման տարեթիվը-1989 թ.,
2.	Նկարագիր	
3.	<p>• Գնահատման օրվա դրությամբ մեքենան գտնվել է անսարք վիճակում :</p> <p>Արտաքին մակերևույթի վրա նկատվում են կոռոզիայից քայքայված տեղամասեր, ներկի ծածկույթի վնասված տեղեր, մետաղի դեֆորմացված տեղամասեր, վերնի ծածկը՝ տենդ :</p> <p>• Մեքենայի հիմնական աշխատանքային հանգույցները չեն հանդիսանում համայնքի սեփականություն և շուկայական արժեքի մեջ նրանց արժեքը ներառնված չէ :</p> <p>• Ըստ համայնքի կողմից ներկայացված միջնորդության, գնահաշվարկներում չպետք է հաշվի առնվի հետևյալ համակարգերը, հանգույցները և դետալները (որոնք գննության օրվա դրությամբ առկա են մեքենայի վրա, սակայն չեն հանդիսանում համայնքի սեփականությունը)՝ Հետնի աջ և ձախ դռների փականները, հետնի անվաթեվերը, նստատեղերը, շարժիչը՝ բացի իրանային դետալից (блок двигателя), փոխանցման տուփը՝ բացի իրանային դետալից, հետնի կամրջակը, արտանետված գազերի խլացուցիչը, ընթացքի բաշխիչ տուփը (раздатка), մեքենայի լուսավորության համակարգը, արգելակման համակարգը, էլեկտրոհամակարգը, առջևի երկու առանցքակալային հանգույցները (хаб), հետնի երկու հարթ զսպանակները, չորս կոմպլեկտ կախոցները (узел амортизаторов), գեներատորը, մեկնարկիչը, կայծային կոնտակտը, թարթիչները, ձեռքի արգելակման համակարգը, շարժաբերի կցորդման համակարգը, հիդրոհամակարգի գլխավոր կաթսան (бачок), կայծի բաժանարարը, վառելանյութի ներարկիչը, հովացման համակարգի դարպասները, ապակու մաքրիչները, սրահի տաքացուման համակարգը, գազասարքի համակարգը, հովացման համակարգի հեղուկի պոմպը, հաստատուն ջերմության պահպանման տվիչը, խաչուկները, անվակունդերը, մարտկոցը, սրահի ցուցիչ սարքերը,</p> <p>• անիվները մաշված, սրահը մաշված վիճակում :</p> <p>• Արտաքին տեսքի, սրահի վիճակի և մեքենայի գնահատման մեջ մտնող հանգույցների և դետալների վիճակի գնահատականը բավարար:</p> <p>Մեքենայի վիճակի նկարագիրը կատարված է ակնադիտական գնման արդյունքում և պատվիրատուի (երրորդ կողմի) կողմից ներկայացված տվյալների հիման վրա: Այն թերությունները, որոնք ակնադիտական գնմամբ հնարավոր չի եղել պարզել, հաշվի չեն առնվել: Պատվիրատուի (երրորդ կողմի) կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ գնահատողը պատասխանատվություն չի կրում: Մեքենան թողարկել հնարավոր չի եղել :</p>	

Ավտոմեքենայի լուսանկարները գնահատման օրվա դրությամբ՝







**7. Գնահատման օբյեկտի շուկայական արժեքի որոշումը**

Գնահատվող օբյեկտի շուկայական արժեքի որոշման համար կիրառվել է գնահատման համեմատական մեթոդը: Գնահատողի կողմից վերլուծվել են ՀՀ տարածքում վաճառահանված ավտոմեքենաների տվյալները: Համեմատելի և համադրելի գույքերի վերաբերյալ տեղեկատվությունը վերցվել է WWW List.am կայքէջում գետնդված տվյալներից: Որպես համեմատության տարրեր ընտրվել են նմանատիպ շարժական գույքի շուկայական արժեքի վրա ազդող հիմնական գործոնները: Որպես համեմատական վերցված ավտոմեքենաների տվյալների նկատմամբ համապատասխան ճշգրտման գործակիցներ են կիրառվել, որպեսզի դրանք համապատասխանեցվեն գնահատվող գույքին:

„Ա.Գ. Էսթեյթ,, ՄՊԸ

Գնահատող 

Համեմատական մեթոդով հաշվարկի արդյունքները ներկայացված են ներքևի աղյուսակներում:

Աղյուսակ 4

Համեմատության տարրերը	Գնահատվող գույք	Համեմատական 1	Համեմատական 2	Համեմատական 3	Համեմատական 4	Համեմատական 5
Ավտոմեքենայի մոդելը	UAZ 31512	UAZ 31512	UAZ 31512	UAZ 31512	UAZ 31512	UAZ 31512
Արժեքը /ՀՀ դրամ/		500000	450000	480000	550000	550000
Տարեթիվը	1989	1982	1980	1985	1997	1985
Ավտոմեքենայի վազքը	300000	300000	300000	300000	300000	300000
Տեղեկատվության աղբյուրը		§List.am/ ID 18796016	§List.am/ ID 19440623	§List.am/ ID 19628566	§List.am/ ID 19649002	§List.am/ ID 19088968
Շուկայի պայմանները	-	առաջարկ	առաջարկ	առաջարկ	առաջարկ	առաջարկ
նուդումը /%/		-10%	-10%	-10%	-10%	-10%
նուդումը / ՀՀ դրամ/		-50000	-45000	-48000	-55000	-55000
նուդված արժեքը /ՀՀ դրամ/		450000	405000	432000	495000	495000
Ավտոմեքենայի տեխնիկական վիճակը	բավարար	միջին	միջին	միջին	միջին	միջին
նուդումը /%/		-10,0%	-10,0%	-10,0%	-10,0%	-10,0%
նուդումը / ՀՀ դրամ/		-45000	-40500	-43200	-49500	-49500
Անսարքության և ապակոմպլեկտավորման վերացման շուկայական արժեքը	**Բացակայո ղ դետալների և հանգույցներ ի ցուցակը բերված է ներքևում:	չունի	չունի	չունի	չունի	չունի
նուդումը / ՀՀ դրամ/		-400000	-400000	-400000	-400000	-400000
Նրա ազդեցությունը շուկայական արժեքի վրա /%/		50,0%	50,0%	50,0%	50,0%	50,0%
նուդումը / ՀՀ դրամ/		-200000	-200000	-200000	-200000	-200000
Ավտոմեքենայի տարիքը	31	38	40	35	23	35
Ավտոմեքենայի տարիքների տարբերությունը		7	9	4	-8	4



ուղղումը /%/		7,0%	9,0%	4,0%	-8,0%	4,0%
ուղղումը / ՀՀ դրամ/		31500	36450	17280	-39600	19800
Լրացուցիչ համակարգեր	գազասարք	գազասարք	գազասարք	գազասարք	գազասարք	գազասարք
Լրացուցիչ համակարգի շուկայական արժեքը /ՀՀ դրամ/		-160000	-160000	-160000	-160000	-160000
Նրա ազդեցությունը շուկայական արժեքի վրա /%/		30,0%	30,0%	30,0%	30,0%	30,0%
ուղղումը / ՀՀ դրամ/		-48000	-48000	-48000	-48000	-48000
Ընդհանուր ուղղումները շուկայի պայմաններով ճշգրտված արժեքի նկատմամբ /ՀՀ դրամ/		-261500	-252050	-273920	-337100	-277700
Համեմատականների ճշգրտված արժեքները /ՀՀ դրամ/		188500	152950	158080	157900	217300
Կշռային գործակիցները համադրման համար		0,2	0,2	0,2	0,2	0,2
Հաշվարկային շուկայական արժեքը /ՀՀ դրամ/					174946	
Կլորացված (դեպի ավելացման ուղղությամբ) Գնահատվող գույքի շուկայական արժեքը /ՀՀ դրամ/					180 000	

\*այլ գնագոյացման գործոններով ուղղումները հավասար են զրոյի :

\*\*Հետևի աջ և ձախ դռների փականները, հետևի անվաթեվերը, նստատեղերը, շարժիչը՝ բացի իրանային դետալից (блок двигателя), փոխանցման տուփը՝ բացի իրանային դետալից, հետևի կամրջակը, արտանետված գազերի խլացուցիչը, ընթացքի բաշխիչ տուփը (раздатка), մեքենայի լուսավորության համակարգը, արգելակման համակարգը, էլեկտրոհամակարգը, առջևի երկու առանցքակալային հանգույցները (хаб), հետևի երկու հարթ զսպանակները, չորս կոմպլեկտ կախոցները (узел амортизаторов), գեներատորը, մեկնարկիչը, կայծային կոնտակտը, թարթիչները, ձեռքի արգելակման համակարգը, շարժաբերի կցորդման համակարգը, հիդրոհամակարգի գլխավոր կաթսան (бачок), կայծի բաժանարարը, վառելանյութի ներարկիչը, հովացման համակարգի դարպասները, ապակու մաքրիչները, սրահի տաքացուման համակարգը, գազասարքի համակարգը, հովացման համակարգի հեղուկի պոմպը, հաստատուն ջերմության պահպանման սվիչը, խաչուկները, անվակունդերը, մարտկոցը, սրահի ցուցիչ սարքերը  
Գնահատվող ավտոմեքենայի շուկայական արժեքը, հաշվարկային արժեքի կլորացումից հետո, կկազմի 270 000 ՀՀ դրամ :

### 8. Արդյունքների համաձայնեցում և ամփոփում

Գնահատվող ավտոմեքենայի շուկայական արժեքը որոշելու համար կիրառվել է համեմատական վաճառքների մեթոդը, որի արդյունքում ստացվել է, որ գնահատման



առաջադրանքով սահմանված նպատակներով և նախապայմանների պահպանմամբ գնահատված „ UAZ 31512,, մակնիշի 923 LL 70 պետհամարանիշով (նույնականացման համար՝ XTT 315120 K0210057) ավտոմեքենայի շուկայական արժեքը 27.06.2023թ. դրությամբ կազմում է՝

180 000\*

/Մեկ հարյուր ութսուն հազար\*/ ՀՀ դրամ:

\*շուկայական արժեքի մեջ ներառնված չեն միջնորդությամբ ներկայացված (համայնքին չպատկանող) դետալների, հանգույցների, համակարգերի շուկայական արժեքները :

### **9. Գնահատման աղյուսների առևտրային գաղտնիության պայմանները**

„ Տեղեկատվությունը ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք է , եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար: Գնահատողը պարտավորվում է պահպանել գաղտնիության պայմանները „ [6]: Գնահատողը պարտավորվում է պահպանել գույքի գնահատման գործընթացում պատվիրատուի կամ երրորդ անձանց կողմից ստացված, կամ հաշվարկների միջոցով պարզաբանված տվյալների առևտրային գաղտնիության պայմանները:

Գնահատողը պարտավորվում է չտրամադրել և չհրապարակել պատվիրատուի կողմից ստացված տվյալները կամ գնահատման արդյունքները, բացառությամբ պատվիրատուի գրավոր համաձայնության կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի :

### **10. Գնահատողի անկախությունը**

Գնահատման աշխատանքներն իրականացնելիս գնահատողն եղել է անկախ և գնահատումն իրականացրել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, „ Հայաստանի Հանրապետության օրենքը գնահատման գործունեության մասին” ՀՀ Օրենքի ( ՀՕ – 419 –Ն ) և „ Հայաստանի Հանրապետությունում գնահատման ստանդարտները, ինչպես նաև գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները սահմանելու մասին,, թիվ N 1355-Ն որոշման դրույթներին համապատասխան:

Գնահատողի անկախությունը հանդիսանում է գնահատման գործունեության իրականացման հիմնարար և պարտադիր պայմանը:

Գնահատողը, ինչպես նաև գնահատման գործունեություն իրականացնող անձը գնահատման օբյեկտի նկատմամբ չունեն գույքային պարտավորություններ կամ պահանջներ, չեն հանդիսանում գնահատման օբյեկտի սեփականատեր կամ օգտագործող, ինչպես նաև գույքի սեփականատեր հանդիսացող ընկերության հիմնադիր մասնակից կամ բաժնետեր, չունեն դրա նկատմամբ գույքային այլ պարտավորություններ կամ պահանջներ, չունեն մերձավոր ազգակցական կապի և չեն գտնվում աշխատանքային հարաբերությունների մեջ գնահատման օբյեկտի սեփականատիրոջ (օգտագործողի), պատվիրատուի, շահառուի հետ:

Գնահատման ծառայությունների դիմաց վարձատրության չափը պայմանավորված չէ գնահատման օբյեկտի գնահատման արդյունքում որոշվող արժեքի մեծությունից :

### **11. Պատվիրատուի և երրորդ անձանց առջև գնահատողի պարտավորությունները**

- Գնահատողը պատասխանատվություն չի կրում գնահատվող սեփականության իրավունքների իրավական նկարագրության կամ սեփականության իրավունքների հետ առնչվող այլ հարցերի համար :
- Պատվիրատուի կողմից ներկայացված սեփականության իրավունքները հաստատող փաստաթղթերը համարվել են հավաստի :
- Վերլուծությունը, մտքերի փոխանակությունը և ստացված եզրակացությունը գործում են միայն նշված հաշվետվության սահմաններում և հանդիսանում է գնահատողի անհատական վերլուծությունը, եզրակացությունը :
- Գնահատողը գործել է որպես անկախ կատարող :
- Գնահատողի կողմից կատարված ուսումնասիրությունները և եզրակացությունները ամբողջությամբ անկանխակալ են :
- Ոչ ներկայումս և ոչ էլ ապագայում Գնահատողը չի հետապնդում որևէ անհատական հետաքրքրություն այս հաշվետվության մեջ նշված գնահատման առարկայի նկատմամբ :
- Գնահատողի աշխատանքների վարձատրությունը կախված չէ գնահատման արդյունքի և եզրակացության հետ :
- Գնահատողի կարծիքը գույքի արժեքի վերաբերյալ ուժի մեջ է գնահատման ամսաթվի դրությամբ :
- Գնահատողը պատասխանատվություն չի կրում գույքի արժեքի հետագա կտրուկ փոփոխությունների համար, որոնք կարող են ի հայտ գալ այդ ամսաթվից հետո, սոցիալական, տնտեսական, ֆիզիկական գործոնների, նաև քաղաքացիական օրենսդրության փոփոխության հետևանքով :
- Գնահատողից չի պահանջվում ներկայանալ դատական աստիճաններին և տալ բացատրություն գնահատման վերաբերյալ, բացառությամբ դատական դատական աստիճանի օրինական հրավերով :
- Գնահատողը պատասխանատվություն չի կրում գույքի այն թերությունների համար, որոնք հնարավոր չէ հայտնաբերել տեսողական զննությամբ :
- Գնահատողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված տվյալների իսկության համար :
- Ելակետային պայմանները, որոնք օգտագործվել են հաշվետվության մեջ ստացվել են հավաստի աղբյուրներից :
- Կազմված հաշվետվությունը դա մասնագետ Գնահատողի կարծիքն է գույքի արժեքի վերաբերյալ :
- Մեր գնահատումը ոչ մի ձևով կապ չունի նախապես հայտարարված արժեքի, տրված եզրակացության կամ հետևանքների հետ :

### **12. Գնահատման համար օգտագործված փաստաթղթերի, գրականության և տեղեկատվության աղբյուրների ցանկը**

1. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք

„Ա.Գ.Էսթեյթ», ՄՊԸ

2. „ Հայաստանի Հանրապետությունում գնահատման ստանդարտները, ինչպես նաև գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները սահմանելու մասին», թիվ N 1355-Ն որոշում
3. Гриненко С.В. Экономика недвижимости. Конспект лекций.: - Таганрог: Иск-во ТРТУ, 2004.107 с.
4. Тарасова, Е.Н. Т 191 Оценка стоимости объекта недвижимости : учеб. пособие / Е.Н. Тарасова, Т.С. Пучнина. – Хабаровск : Изд-во ДВГУПС, 2009. – 63 с.: ил
5. Фридман Дж., Ордудей Ник. Анализ и оценка приносящей доход недвижимости. Пер. с англ. М.: Дело, 1997. -480 с.
6. „ Հայաստանի Հանրապետության օրենքը գնահատման գործունեության մասին” ՀՀ Օրենքով ( ՀՕ – 419 –Ն )
7. List.am կայքէջ:
8. Методика оценки стоимости поврежденных транспортных средств, стоимости их восстановления и ущерба от повреждения. Р-03112194-0377-98. Утверждена Министерством транспорта Российской Федерации 15 декабря 1998 г.
9. Методика нормирования расхода материалов на капитальный и текущий ремонт автомобилей. Государственный научно - исследовательский институт автомобильного транспорта (НИИАТ). М., 1989. 180 с.
10. Оценка машин оборудования и транспортных средств. А.Н. Асаул, В.Н. Старински, А. Г. Бездудная, П. Ерофеев.

ԳՆԱՀԱՏՈՂ՝



Ա. Պապոյան /Վկայական № ԳԳ-2022-11/

ՏՆՕԴԵՆ՝



Գ. Պապոյան





# 13. ՀԱՎԵԼՎԱԾ



## ՎԿԱՅԱԿԱՆ N ԳԳ-2022-11

Սույն վկայականը տրվում է

### ԱՐԱՐԱՏ ՈԱՖԻԿԻ ՊԱՊՈՅԱՆԻՆ

(անունը, հայրանունը, ազգանունը)



առ այն, որ նա մասնակցել է  
Կադաստրի կոմիտեի կողմից  
կազմակերպված  
գնահատման գործունեության  
որակավորման քննության:  
Կադաստրի կոմիտեի ղեկավարի  
2022 թվականի հոկտեմբերի 24-ի N384-L  
հրամանի համաձայն տրամադրվել է

### ԳՆԱՀԱՏՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

Գործողության ժամկետը մինչև 24 հոկտեմբերի 2027 թ.

Կադաստրի  
կոմիտեի ղեկավար՝



(ստորագրություն)

Սուրեն Թովմասյան  
(անունը, ազգանունը)

Կ Տ

24 հոկտեմբերի 2022 թ.

QR-կոդ (երկչափ շտրիխ կոդ) Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքի միջոցով:



09/3/1-Պ22-LB001433

**“ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ” ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ԳՆԱՀԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ  
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

# LB001433

Խնդրում ենք բննարկել այս ազատ իշխաբ ուրյան պայմանագիրը և վերադարձել 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե այն չի  
համապատասխանում Ձեր պահանջներին

ԵՐԵՎԱՆ  
2022

09/3/1-Պ22-LB001433-1

**# LB001433** ԳԱՎԱՑՈՒՄԵՐԻ ՊԱՅՄԱՆԱՍԿԱՑՄԱՆ ԳԱՐՏԱԴՐՈՒ  
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱՑՄԱՆ ՀԱՅՏԵՎԱԾ ԹԻՎ 1

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ապահովագրող), ի դեմս Գործադիր տնօրեն Արմին Մեղրեյանի, մի կողմից, և «Ա.Գ. ԷՍԹԵՅՑ» ԱՊԸ (այսուհետ՝ Ապահովադիր), ի դեմս Գործադիր տնօրեն Գ. Պապոյանի, մյուս կողմից, այսուհետ միասին՝ Կողմեր, կնքեցին Պաշտատիր պատահականատվության պարտադիր ապահովագրության թիվ **LB001433** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) այն Հավելվածը (այսուհետ՝ Հավելված) Պայմանագրում կատարելու ստորև նշված փոփոխությունները:

1. Պայմանագրին կից հավելված 1՝ Գնահատողները ցուցակում գնահատողների որակագրման վրա ակտաները մոփոխելու մեկ նշվելով՝

Անուն/ազգանուն	Որակագրման վերջականի համար/ներիա, տրման ամսաթիվ
1. Գևորգ Պապոյան	N ԳԳ-2022-37 տրված՝ 15/11/2022թ.
2. Արարատ Պապոյան	N ԳԳ-2022-11, տրված՝ 24/11/2022թ.

- 5. Այն է կապում ուժի մեջ է մտնում 30/12/2022թ. -ից և գործում է մինչև 30/06/2023թ.-ը ներառյալ:
- 6. Այն Հավելվածը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
- 7. Այն Հավելվածը կազմված է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասար իրավասունական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒ

ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ ԱՓԲԸ

ՀՀ, ք. Երևան, Արամի 3, 5

Հեռ.՝ 060 54 00 00

Հ/ի՝ 163308157113 Հայկական բյուրոյի ԲԲԸ  
ՀՎՀՀ՝ 02551344, Լոյսնախա ԱՊԸ 0033

Գործադիր տնօրենի ժ/վ

Հայկ Կախիկյան

Մեծատնային փող.

30/05/2023թ.

ԱՊԱՀՈՎԱԴՐՈՒ

«Ա.Գ. ԷՍԹԵՅՑ» ԱՊԸ

Հասցե՝ ՀՀ, Երևան, ք. Գյումրի, Գ. Նժդեհի 26 շ., 21/1

ՀՎՀՀ՝ 05544472

Հ/ի՝ 11802025698800, «ԱՅԻԻ ԲԱՄԿ» ՓԲԸ Գ/Ո

Հեռ.՝ +374 96 55 77 53

Գործադիր տնօրեն

Գ Պապոյան



Բնացե՝ ԲԲ, ք. Երևան, Արամի 3 հ. 5  
Բեռ.՝ (+374 60) 54-00-00  
Էլ. փոստ՝ info@silinsurance.am  
Վեբ կայք՝ www.silinsurance.am



Address: 3, 5 Aram str., Yerevan, RA  
Tel.: (+374 60) 54-00-00  
E-mail: info@silinsurance.am  
URL: www.silinsurance.am

Գնահատող

**ՄԻՋՆՈՐՂԳԻՐ**

Վարդենիսի համայնքապետարանի հաշվեկշիռն անցած UAZ 31512 մակնիշի 923LL70 պեհամարանիշի ավտոմեքենայի գնահատման

Հաշվի առնելով, որ Նախկին Գեղամասարի համայնքապետարանի հաշվեկշիռում գտնվող UAZ 31512 մակնիշի 923LL70 պեհամարանիշի ավտոմեքենայի (Վարդենիսի համայնքապետարանի հաշվեկշիռն է անցել 2021թվականին) շահագործման համար և ընթացքում մեքենան վարողի կողմից իր անձնական միջոցներով իրականացվել են հետևյալ վերանորոգման աշխատանքները ու ավտոմեքենայի վրա դրվել են ստորև ներկայացվող պահեստամասերը.

1. Վերանորոգվել է թափքի ետևի աջ և ձախ դռները՝ տեղադրվել են նոր փականներ, ինչպես նաև անվաթևերը և նստատեղերը:

3. Ամբողջությամբ վերանորոգվել է շարժիչը՝ բացի արգելափակիչից (ճոօկ), փոխանցման տուփը՝ բացի պատյանից (ռոյպի), ետևի կամրջակը (մոստ), դրվել է խլացուցիչը (ռուպիտել) և բաշխիչ տուփ (բաշտակ):

4. Ամբողջությամբ տեղադրվել է լուսավորության համակարգը, արգելափակման համակարգը, էլեկտրոհամակարգը, դրվել է դիմացի երկու նոր հանգույց (ռաբ), ետևի աջ զսպակներից (բեօօր) երկուսը, կախոցներ չորս հատ (ամորտիզատոր), գեներատոր (դինամո), մեկնարկիչ (ստարտեր), կոնտակտ (կաշակա), թարթիչներ, ձեռքի արգելափակման համակարգ, կցորդման (սցեփլենիե) համակարգ, կցորդման գլխավոր կաթսա (գլաՎնիյ բաչոօկ), կրակման բաժանորդ (տրմբլեր), վառելանյութի ներարկիչ (կարբյորատոր), հովացման համակարգի դարպասներ (ախյոՅԻ ռադիատոր), ապակու մաքրիչներ, սրահի տաքացուցիչ, գազի ամբողջական համակարգ, հովացման հեղուկի մոնի (նոմո), կայուն ջերմություն պահպանող ապարատ (տեռմոստատ), խաչուկներ (կրեստաՎին), անվակներ, մարտկոց և սրահի բոլոր ցուցիչները (յուղի, ջրի և այլն), միջնորդում եմ՝

Վերը նշված ավտոմեքենայի գնահատման ժամանակ արժեքը ձևավորելիս նշված աշխատանքների և ավտոմասերի արժեքները չներառել ավտոմեքենայի գնի մեջ:

Միջնորդող՝

Վարդենիսի համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյան՝

26.06.2023թ.



5	ՊԵՏԱԿԱՆ ՌԵՍՏՐԱՑԻՆԵ REGISTRATION NUMBER	923 LL 70	ՍՊՐՈՒՑ-ՑՈՒՑԱՆԻՑ TYPE OF ENGINE	ԲԵՆԶՈՒՆԱՅԻՆ GASOLINE
6	ՍԱՆՈՒՑ MAKE	UAZ	ՍՊՐՈՒՑ-ՑՈՒՑԻ ENGINE NUMBER	
7	ՏՐԱՊԵՆԻ TYPE	31512	ՊԵՏԱԿԱՆ ՌԵՍՏՐԱՑԻՆԵ CHASSIS NUMBER	02 10057
8	ՍՊՑՈՒՑԱՆԻՑ VEHICLE CATEGORY	ԹԵՌԵՎ ՍԱՐԴԱՏԱՐ PASSENGER	ՍՊՐՈՒՑ-ՑՈՒՑԻ BODY NUMBER	4054
9	ՍՊՐՈՒՑԱՆԻՑ BODY TYPE	ՈՒՆԻՎԵՐՍԱԼ UNIVERSAL	ՍՊՐՈՒՑ-ՑՈՒՑՆԵՐԻ ԿՎԵՂՈՒՄ ENGINE POWER (kW/HP)	67/92
10	ՓՈՒՑԻ COLOUR	ԳՈՐԸ GRAY	ՊԵՏԱԿԱՆ ՌԵՍՏՐԱՑԻՆԵ-ՍՊՐՈՒՑԱՆԻՑԻ ՄԱԿՍԱՆՆԵՐԻ ՄԱԿՍ PERMISSIBLE MAXIMUM WEIGHT (kg)	2350
11	ՊԵՏԱԿԱՆ ՌԵՍՏՐԱՑԻՆԵ YEAR OF ISSUE	1989	ՍՊՐՈՒՑ-ՑՈՒՑՆԵՐԻ ՆԵՏՈՒՄ NET WEIGHT (kg)	1600
12	ԼՈՒՐԱՆՈՒՄ VIN	XTT 315 120K02 10057	ՍՊԵՏԱԿԱՆ ՌԵՍՏՐԱՑԻՆԵ SPECIAL OBSERVATIONS	

AM		ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՑԱԳԻՐ VEHICLE REGISTRATION CERTIFICATE СВИДЕТЕЛЬСТВО ОБ УЧЕТЕ ТС	
ՍՊՐՈՒՑԱՆԻՑ «ՀՀ ԳՄ ԳԵՂԱՄԱՍԱՐԻ Հ-ՊԵՏԱՐԱՆ»			
ՍՊՐՈՒՑ «ՀՀ ԳՄ ԳԵՂԱՄԱՍԱՐԻ Հ-ՊԵՏԱՐԱՆ»			
ՍՊՐՈՒՑԱՆԻՑ ԳԵՂԱՐԳՈՒՆԻՑԻ ԵՍՈՑԵ 1623 4-ՐԴ ՓՈՂՈՑ 47			
ADDRESS 4-RD POGHOC, 47, SOTQ, GEGHAMASAR, GEGHARQUNIQ			
ՏՐԱՊԵՆԻ ISSUED AT	ԲԵՂԱՍԱՐ POLICE RA	ՍՊՐՈՒՑ DATE	01/12/2020
		ՍՊՐՈՒՑ XL065421	